



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 12

— Շ Շ Ա Ր Ա Ր —

18 ՄԱՐՏ 1906

Կ. ՊԱՊՕՆԵ ՀԱՄԱՐ		ԳԱԻԱՌԱՑ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍՏՀՄԱՆԻ	
Տարեկան	50 Ղրշ.	Տարեկան	54 Ղրշ.	Տարեկան	12 Ֆր.
Վեցամսեայ	25 ,	Վեցամսեայ	27 ,	Վեցամսեայ	6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՍՏԵՆ ՎԱՅԱՆՆԵՐՆԵՐ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, ձեռնարկի խանիկան, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները զերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ՉԵՆԻԹԵՐ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գումարացիք պայմաններով:

Ծանօթ. — ՉԵՆԻԹԵՐ ժամացոյցները Բաքիի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգէնին արժանացած են:


Հատը 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԱՌԻՄԻՆԵԱՆ

(Տ. Ա. Ասադուրյան) شرکت مرتبه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճաշքսի Թիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
փանգամայն մեխանիկ
կը գտնուի

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ
ՀԱՅԹԱՅԹԻՁ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ
THE SINGER
MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է . այն մեքենան ամենէն կատարեւ լաւործուածը ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՀԱՅԹԱՅԹԻՁ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

- | | |
|---------------|--|
| ՐՍԲԱ | (1. Մեծ փողոց , Պօն Մարշէի դէմ , թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան , Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ , Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ , Թրամվէյի կայարանին դէմ , թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | Չարչը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ
343 կրկին , Տիւզոզլուի տունը :

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնադր. 1860 իւնի 1 Վիեննա



ԿԵԱՆՔԻ ՃԻԻՎ

Դրամագումար եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԿ



ՀՐԴԵՂԻ ՃԻԻՎ

Դրամագումար եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԿ

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք և
կարասիք :

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք
մարդկային կեանքի վրայ :

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի՝ և առագաստանաւի վրայ :

Ընկերութեան գրամատունն է ՔրէՏի ԼիՕնէ , Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս , Ալեանաք խան , թիւ 11 — 16 :

Ընկերութիւնս՝ կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիազօր ներկայացուցիչ

Գ. Ֆ Է Ր Ա Տ Ե Ա Ն



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՔԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 12

ՇԱՔԱԹ

18 ՄԱՐՏ 1906

ԱՆԳԼԻԱՑԻՓ ԻՆՉՊԷՍ ԿՈՒԶԵՆ ՈՐ ԿՐԹՈՒԻՆ

ԻՐԵՆՑ ԶԱԽԱԿՆԵՐԸ ԴՊՐՈՑԻՆ ՄԷՉ

Կրթական նոր ոգի մըն է որ սկսած է թափանցել անգլիական մտքին մէջ երկրին մէկ ծայրէն միւսը։ Համեմատութիւն, չափ, սահման դնել դատաւարակութեան մէջ, և տեղական պէտքերուն ըմբռնումէն վերանալով աստիճանաբար ընդլայնել ծրագիրը, սկսեալ ազարակային գիւղերէն մինչև կեդրոնի մեծ քաղաքները։ Այս է ոգին։

Մր. Մէտ այս նիւթին վրայ բանախօսութիւն մը արտասանեց ուրբաթ օր Լոնտոնի մէջ։ Ունկնդիրներու մեծագոյն մասը ուսուցիչներ էին։ Բանախօսը կորովի, պայծառամիտ, և միանգամայն պաղարիւն մարդ, ամէնուն ալ ուշադրութիւնը գերեց։ Ահա վերլուծումը Մր. Մէտի բանախօսութեան։

Տղայք դպրոցէն կը մեկնին խորհուրդ անկարող վիճակով։ Մանչէսթրի

վաճառականները, եթէ աշխոյժ տղու մը պէտք ունենան՝ հոս հոն վազցնելու, նախամեծար կը համարին փողոցէն անուտ տղայ մը առնել այդ գործին համար քան թէ դպրոցէ ելած տղայ մը։ Մեր ամբողջ կրթական դրութիւնը չա՛տ ու չատ հեռի է տղայոց կեանքին իրական պէտքերէն, անօգուտ տեղեկութիւններէ կազմուած քուրջի պարկեր կ'ըլլան անոնք։ Ասոր վրայ աւելցուցէք ա՛յն տեսակ մը յաւակնութիւնը, զոր կ'իւրացնեն իրենց պէտքէն ու չըջանակէն վեր եղած ծանօթութեանց ստացմամբ, և կ'ունենաք պատկերը թաղային չըջանաւարտ աշակերտի մը, որ իր գոյութիւնը աննըպատակ կը ձգձգէ, սա՛ գործին չերթար ամօթ համարելով, նա՛ աշխատութեան չի յարիւր աւելի բարձր իտէալի մը ետեւէն իյնալով։

Մեր տարրական դպրոցներուն սովորական արտագրութիւնը — Մր. Մէտն է որ կը խօսի — ամէն տեսակ տեղեկութեանց քուրջի պարկ մըն է, ուշագրութիւն ըրէք, պարկ մը՝ որուն մէջ խառնուած են ամէն մեծութեամբ, ամէն կարգի կտորուանքներ, որոնք ոչ առանձինն կարեւորութիւն ունին, և ոչ կարելի է երբեք իրարու կցել զանոնք: Անպէտ և փցուն բաներու մուսէոն! մը, զոր կազմելու համար արդեօք ո՛րքան ժամավաճառ ըրինք ուսանողները, և մենք ալ եղանք ժամավաճառ: Տղան մեքենայ մը դարձաւ, որ կրնայ կարդալ անտարբեր կերպով, բայց ո՛չ բանաւորապէս, կրնայ գրել, բայց չի կրնար հեգել, գրի մեքենայ մը պարզապէս, գիտակցութենէ զուրկ: Բայց ա՛ն պէտք է ըլլայ դաստիարակութիւնը: Մր. Մէտի իտէալը աւելի բարձր է. — Տղան պէտք է սովորի «խորհիլ, հետազօտել, դիտել, բանալ իր աչքերը», պէտք է մարզուի «հնարամտութեան, իմացականութեան և զննութեան»:

Բանախօսը շարունակելով դատապարտեց զանազան ծրագիրները, որոնց նպատակն է մասնաւոր դաստիարակութիւն մը հայթայթել գիւղական դպրոցներուն՝ տղաքը հողային աշխատութեանց կապելու համար: Աղէ՛կ այս ծրագիրները, բայց մէթոտնիս սխալ է: Երկրագործութեան պատրաստելու համար մեր տուած մասնագիտական դաստիարակութիւնը կանխաւ անյաշնոգութեան դատապարտուած է: Գործնական նպատակի համար կուտ մը անգամ չարժեք ա՛յն երկրագործութիւնը զոր կը սովորեցնէ ուսուցիչ մը որուն գիտցածը գրեթէ մէջէն է միայն:

Մր. Մէտ օրինակ բերաւ գիւղական դպրոցի մը մէջ աւանդուած հետեւեալ դասախօսութիւնը, որուն նպատակն է եղբի գիւղական կեանքին ճաշակը տալ տղուն:

Վարժապետը (ձեռքը կենդանիի մը պատկերը բռնած). — «Տղաքնե՛ր, ի՞նչ է ասիկա»: Լռութիւն:

Վարժապետը. — «Ասիկա նապաստակ մըն է»: Ըսէ՛ք ինձի հետ «նապաստակ մը»:

Տղայք խմբովին. — «Նապաստակ մը»:

Վարժապետը. — «Արդ, նապաստակները ո՛ւր կը բնակին»: Լռութիւն:

Վարժապետը. — «Նապաստակները կը բնակին ծակերու մէջ»: Արդ, տղաքնե՛ր, ըսէք ինձի հետ, «նապաստակները կը բնակին ծակերու մէջ»:

Տղայք խմբովին. — «Նապաստակները կը բնակին ծակերու մէջ»:

Կը տեսնուի թէ տղայք պարզ մեքենայի մը պէս կը կրկնեն ուսուցչին բառերը, զանոնք սխալ հասկնալով, սխալ արտասանելով, որովհետեւ թույլ թակի պարզ գործողութիւն մը միայն կը կատարեն: Վարժապետը «ըսէ՛ք» կ'ըսէ, և տղայք կ'ըսեն պարզապէս:

Առարկայական դասերը ա՛յսպէս ըլլալու են, պատ՛երին վրայ ցոյց տրուած առարկաները տղայք կրնա՞ն միթէ բուն, կենդանի առարկաներուն պատշաճեցնել: Հարկւրին իննսուն ո՛չ նահապետական դրութենէն ի՞նչ տարբերութիւն ունի այս մէթոտը: Մէջտեղը միայն գունաւոր կամ անգոյն պատկեր մը կայ: Հին վարժապետները առանց պատկերի ալ այսչափ բան կրնային սովորեցնել իրենց աշակերտներուն, և մասնաւոր աւելին ալ: Հին աշակերտները աւելի՛ կը սիրէին Բնու-

թիւնը, աւելի մօտ կ'ապրէին Բնութեան, աւելի կը յարէին երկրագործութեան և գիւղական զբաղումներու, և պատկերին վրայ սովորելու տեղ Բնութեան մէջ յաճախ իրապէս կը սովորէին կենդանիները: Քանի՜ տղայ հիմա դպրոցին մէջ նապաստակին ինչ ըլլալը գիտեն, բայց ի թերեւս վերացական ծանօթութենէ մը:

Նոյնը հասկցիր նաեւ միւս բոլոր ուսումներուն համար: Գործնական հաշիւներէն բան մը չեն գիտեր յաճախ մեր տղաքները, բայց Լօկարիթմա գիտեն, տոկոսի, տասանորդի խնդիր մը լուծել տալու համար առջեւնիս տղայ չենք տեսներ, բայց ա, բ, գ, հաւասարութեանց ալճեպրայական խնդիրներու մասնագէտներ ունինք, նորնոր:

Մը. Մէտ տիպար դպրոց մը ցոյց տուաւ Լոնտոնի մէկ արուարձանին մէջ հաստատուած: Դիւաւոր ուսուցիչը, (որ հին դպրոցին պատկանող մըն է, և վարժապետանոցի մէջ յղկուած, զտուած վերացական իմաստակ մը չէ), իր արուարձանին մէկ քարտէսը շինած է դասարանի մը տախտակամածին վերայ: Իւրաքանչիւր աշակերտ իր բնակած փողոցը չուկէա բռնելով կը սովորի իր արուարձանին աշխարհագրութիւնը, և կրնայ հետզհետէ մեծագոյն դիւրութեամբ Թէմիլ գետէն վար իջնել, մինչեւ Անվէրս երթալ, «կողմնացոյցը Անգլիոյ սրտին վրայ չտկած», և այսպէս շարունակաբար: Այս տեսակ ուսուցումով կրնաք հասնիլ ինքնակրթութեան, որ դաստիարակութեան մէջ մեր ամէնէն բաղձացեալ նպատակը ըլլալու է: Միայն թէ պէտք է որ ուսուցիչը սովորեցնէ իրերէն, ո՛չ թէ գիրքերէն:

Ուստի Մը. Մէտ կը դատապարտէ

ներկայ «մէթոտ»ը, և կը պաղեցնէ իր ունկնդիրները Բէսթալոցցիի և Ֆրէտպէլի պաշտելութենէն, յայտարարելով հանդերձ թէ անոնց ուսուցման ձեւը առած ենք յաճախ և ոչ ոգին: Այդ մանկավարժներուն «մէթոտ»ը արդէն իսկ սկսած է նեղացուցիչ և անպէտ ըլլալ՝ նուազ խնամով պատրաստուած վարժապետներու և վարժուհիներու գոյութեամբ: S.

ՊԱՐՈՒՀԻՆ

Տիկին Է. Ին

Սեւ մագերով ճակիկն վերեւ հանգրիճուած Քանի՜ պատիկ շրջեղներ ե ո՛վ Աստուած, Գլխարկն աղուոր, որուն փետուր ձիւն հաւակ, Կը շարժի մերք որպէս սիրուն զարգմանակ, Հապա դեմքը՝, արտասովոր առած փայլ, Կը ստուերոսի կիսաշուքով մը մոռայ: Գործիմանի պատրաստ շրթներ շնորհալի, Որոնց առջեւ քար մը անգամ կը հաշի, Ակնահաճոյ լանջին հոշանի գեղ գոհար Որուն վրայ ծիր սանթրիկն կը դողար, Ոչ մեկ փոքրաւ, եւ ոչ իսկ մեկ ծաղի ունի, Այլ անեկն դին ե շրջեղ եւ գեղունի: Թաշե քարակ միկնաւորիկ ժապաւեկ Լոկ վրդին շուրջ գրքեր ե դոյզն ապաւեկ: Ժանեակ պրուզը պարփակելու կը վախկայ Այդ լայնածիր հոծ իրանը մարմարեայ, Ուսի վարեկ, գիրգ հպումով դեպ ի վեր. Կը սողոսկի, ծածկել ուսերն գեղազեր, Եւ փաթթուած պիրկ, քեւերուն միկնել վար Կը սահի, եւ յանկարծ կուռի սնափառ: Գեղանկար շրջագգես մ'աշ բոյորշի Կը պարուրե մեջքը որպէս գոյորշի: Ներկապրնակ մ'աշ կը ծածկե սակաւ սեղ Փեղերուն մօտ ծաղկի փունջեր սիրագեղ: Եւ վերջապէս նուրբ կօշիկներ սրտափր, Կը շրջացնեն այս պարուհին գեղափրիք: Այս կարճ տողեր զինքն նկարել չեն կարող, Պեք եր տեսնել զարդին մեջ զինքն նշրջաշող: Եւ ես մեքովս իր գեղն ու փայլ կերագեմ, Երբ կը վալսե խիստ նրբութեամբ, սիգանձմէ Բերա Գ.

ՓՈՒՆՈՑ ՀԱՅ

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

ՀԱՅ-ԼԵՋՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

ՆՇԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Մօտէն ճանչցա՞ծ էք Թորոսեան Նշանը, կարող հայկաբանը, որ հմուտ է հինին հետ նորին հաւասարապէս, եւ որ կը գրէ զայն մեկին ու աղուոր ոճով մը:

Թորոսեան լուրջ մարդ մըն է եւ հեզահամբոյր, եւ գրեթէ միշտ տեսչական պաշտօններ վարած է նշանաւոր կեդրոններու, Ակնայ, Ռոստոյի եւ Մակաւայի մէջ, ուր բաւական թուով աշակերտներ հասցուցած է, յիշենք ատոնցմէ, բանաստեղծ Յարութիւնեան Արտաշէսը:

Պզտիկ անեկդդ մը, եթէ կը հաճիք՝ Թորոսեանէն իր Գատը-գիւղի Արամեան դպրոցին տեսչութեան գանտիտա ներկայանալուն առթիւ:

Դպրոցական արձակուրդի մը Թորոսեան Պոլիս կը գտնուի, ու պատահմամբ նոյն պահուն Գատը-գիւղի Արամեան դպրոցին համար տեսուչ մը կը փնտռուէր Հոգաբարձութեան կողմէ, որ իր այն ատենուան անդամակիցներէն՝ բանաստեղծ Ա. Փանոսեանին յանձնուած էր անոր ընտրութիւնը, ու գանտիտաները կը դիմէին բանաստեղծին Ղալաթիոյ մէջ բացած նպարեղէնի խանութը:

Թորոսեան ուզելով առիթէն օգուտ քաղել, նախ կը դիմէ Ուսումնական Խորհրդոյ գործօն եւ իրեն ալ ծանօթ մէկ անդամին, ու այդ պաշտօնին համար յանձնարարական մը կը խնդրէ:

Ամառ էր:

Տօյ ճերմակ հագուստով մը կը ներկայանայ Թորոսեան, որուն քանքաջօնը այնքան կարճըցած էր որ, հագածին երկայն թէ կարճ ըլլալը տարակուսելի էր... սպիտակ շապիկ մը հագած էր եւ մէջքէն ալ կաշեայ գօտի մը կապած, որուն սակայն թիթեղեայ կոճակը ամառուան արեւին տակ յաճախ ակնախտիդ փայլեր կարձակէր:

Ուսումնական Խորհրդոյ այդ յարգելի անդամը սակայն անուղղակի կերպով ու տա-

րօրինակ ժպիտով մը կը հասկցունէ թէ այդ պաշտօնին իրրեւ գանտիտա ներկայանալէ առաջ, պէտք է արտաքինին ալ հոգ տանիլ:

Չը մոռնամ ըսելու թէ՛ Արամեանի այն տարուան Հոգաբարձութեան անդամներէն մին ալ ներկայ էր այդ խօսակցութեան:

Թորոսեան հետեւեալ օրն իսկ սակայն, կամացուկ մը սեւ ռեզինկօթ մը հագած կը դիմէ ուղղակի Փանոսեանին, որ իր սուր աչքերով Թորոսեանի կարողութիւնը առաջին վայրկեանէն իսկ կը գնահատէ եւ բազմաթիւ դիմողներու մէջ՝ առաջնութիւնը անոր կուտայ:

Իր այդ պաշտօնին անցնելը ուրեմն, — զոր կը վարէ գրեթէ տասներկու տարիներէ ի վեր — նախ կը պարտի իր կարողութեան, իր ակնցիական խորամանկութեան, լեզուին, ու երկրորդ՝ իր նոր առած սեւ հագուստին:

Թորոսեան այդ օրէն ի վեր ուշտէնկօթէն ուրիշ հագուստ երբէք չէ հագած:

Ինք իրրեւ վարչական մարդ՝ գիտէ վարուիլ ամէն դասակարգի մարդոց հետ, եւ Թաղականներու ու Հոգաբարձուներու հետ շատ խնդիր ունեցած չէ, որովհետեւ Ակնցի է:

Իր դասաւանդութեան եղանակը լաւ է եւ հասկնալի, միայն թէ դասի ատեն իր կրկնութիւնները շատ են յաճախ ու ձանձրացուցիչ ուսանողներուն համար:

Դասարանին մէջ քիչ մըն ալ շատախօս է Թորոսեան, արդեօք ասիկայ առաւելութիւն մը կրնա՞նք նկատել դասատուին համար:

Թորոսեան հմուտ է բաց ի հայերէնէն, Օսմաներէն եւ Ֆրանսերէն լեզուաց, ինչպէս նաեւ տօմարակալութեան:

Օսմաներէնի մէջ մանաւանդ բաւական հմտութիւն ունի, հոս կը յիշեմ Սուլթանեանին հրատարակած «Լոյս»-ին մէջ, օսմանեան ուղղագրութեան մասին, հմուտ տաճկաբան կարապետեան Զէգի էֆէնտիի հետ ունեցած վիճաբանութիւնը, որուն մէջ Թորոսեան ինքզինքը բոլորովին նոր ուղղագրութեան պաշտպան ցոյց տուաւ, իսկ կարապետեան էֆէնտի միշտ գործնական ու Պետական լեզուի ուղղագրութեան, որ անշուշտ տիրողն է մեր մէջ:

Թորոսեան հեղինակութիւն մ'ալ ունի.

« Հերացի շարադրութեան եւ վայելչախօսութեան » redactionի հետեւողութեամբ դասագիրք մը, որ յաջողակ գործ մ'է սակայն, պատրաստուած մանկավարժական դրութեամբ:

×

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԻԱՆ

Ուսուցիչ մը յարատեւ աշխատող, հաւաքող, բաղդատող, մտածող եւ հրատարակող: Գաբամաճեան աւելի հին դպրոցի ուսուցչաց կը վերաբերի, եւ իր դասական-դուսին մասնաճիւղն է հայ. գրարաւորութեւ շարագրութեան դասեր ալ կ'աւանդէ, բայց իր շարագրութեան նիւթերու ընտրութիւնը աւելի հին ոճով է, այնպէս որ անոնք յաճախ չեն նպաստեր ուսանողին միտքը զարգացնելու:

Գաբամաճեան իբրեւ դասատու այնքան օգտակար չէ ուզած ըլլալ, որքան հեղինակ դասական գրքերու, ինք բարի ուսուցիչ մըն է, այնպէս որ երբ իր աշակերտին օրագրութիւնը աչքէ անցնես, ամէն ալ առանց բացատրութեան բարձրագոյն թիւը ստացած են: Չեմ գիտեր թէ ճշմարիտ արժանիքները չի կարենալ գնահատելու արդիւնք է ստիկայ, թէ քաջալեր մը աշակերտներուն, խթան մը առաւել եւս աշխատեցնելու համար զանոնք:

Գաբամաճեան մայրաքաղաքիս գլխաւոր թաղերէն Բերայի, Խաղաղի եւ Գատըգիւղի դպրոցներուն մէջ դասախօսած է, բայց դժբաղդաբար երկարատեւ չըջաններ չէ կրցած բոլորել:

Գաբամաճեան՝ Սկիւտար, Պաղար պաշի գերեզմանատան դիմացը, քիչ մը ատեն վարժարանի պէս բան մը բացած է, եւ մէկ տարիի չափ ալ Մաքրի-գիւղի դպրոցին տեսչութիւնը վարած, որոնք դժբաղդաբար արդիւնաւոր չըջաններ չեն եղած, որովհետեւ Գաբամաճեան երբեք չի սիրեր վարչական, տեսչական գործերով զբաղիլ:

Իր սիրած գործը դասական գրքեր հրատարակելն է, որոնք մանկավարժական գրութեամբ պատրաստուած, կատարեալ

գործեր են ու շատ ալ օգտակար եղած են մեր երկսեռ ուսանողութեան:

Մանաւանդ իր « Հաւաքածոյ » ներք, որոնք նորութիւններ են մեր մէջ եւ որոնք արդարեւ գրական գեղեցկութիւններով, նորութիւններով օժտուած ու ճոխացած են, եւ կարեւոր տեղ մը կը գրաւեն մեր ներկայ դասական գրականութեան մէջ:

Գաբամաճեանի « Հաւաքածոյ » ներք են որ այսօր գրեթէ մեր բոլոր թաղային ու մասնաւոր վարժարաններուն մէջ կը գործածուին:

Բայց, ա'լ աչքդ լոյս, Գաբամաճեան, հաւաքածոյ չինողներուն թիւը հրապարակի վրայ տակաւ պիտի շատնայ, եւ անոնք՝ որ քու կատարեալ գործերուդ կը նախանձին՝ ձեռնարկած են հաւաքածոնքերու պատրաստութեան:

Ռամկօրէն գրող Թէոդիկն ալ այս օրերս հաւաքածոյ մը կը պատրաստէ, իր յօդուածներուն ամփոփումը թերեւս, բայց, հանգիստ եղիր, անոր գործը ո'չ Ուսումնական Խորհուրդը կրնայ վաւերացնել եւ ո'չ ալ անիկայ կրնայ մեր վարժարաններուն մէջ մուտք գտնել, քանի որ անշուշտ Թէոդիկին լեզուէն՝ ռամկօրէնէն տարբեր լեզու մ'է, որ կը բաղձանք սորվեցնել մեր վաղուան սերունդին:

Եթէ կը հաճիք, պզտիկ ակնարկ մը Գաբամաճեանի գործերուն վրայ: Անոր Բերականութիւն հայերէն լեզուի, 1897ին տըպուած, եւ 360 էջերէ բաղկացած, ընդարձակ եւ խնամեալ գործ մը, զոր հրատարակեց Սկիւտարցի գիտնական-ուսուցիչ Ուղուրիկեան Խաչիկէն օգտուելով, բայց Մխիթարեան վարդապետները երկար ու բաւական ծանր քննադատութիւններ ըրին ծիւլէլեկեանին էֆէնտի ձեռիսէյի Շարֆիյիին մէջ, որոնք առանց պատասխանի մնացին, եթէ չենք սխալիր:

Սիմոն Գաբամաճեան բաւական դաղդալ գիտէ եւ ունի թարգմանութիւն մը Բարեկիրթ աղջիկ ու, պատկերազարդ ընթերցարան մը, 200 էջերէ բաղկացած, եւ ձօնուած Տիկին Զարուհի Ռ. Յ. Պէրպէրեանի յիշատակին, որուն արժէքը կը բարձրացնէ ուսուցչապետ Պէրպէրեան էֆէնտի խոր

սուգի ցաւին ազդեցութեան տակ գրած յուզեալ նամակը, թարգմանիչ Գաբամաճեանի ուղղեալ:

Յիշենք Ս. Գաբամաճեանի միւս աշխատասիրութիւնները, որոնք ո՛չ նուազ օգտակարութիւն ունեցած են մեր ուսանողութեան:

«Փնջիկ» եւ «Փոքրիկ Ընթերցարան», բազմաթիւ սիրուն պատկերներով ճոխացած, երկու պզտիկ գիրքեր, պլտիկներու համար: «Նոր ծաղկաքաղ» եւ «Հաւաքածոյ» ներուն երկու հատորները, «Նամականի առձեռն», «Նոր բառագիրք հայ. լեզուի» եւայլն, այս վերջինն ալ դարձեալ պատրաստուած է աշխատակցութեամբ Ուղուրիկեան խաչիկի, որ գրեթէ գործէ քաջուած, կ'աշխատակցի թէ-ողբիկին հրատարակած ու հրատարակելիք գործերուն:

Ս. Գաբամաճեան 1884ին խմբագրապետը եղած է «Ընտանիք» ընտանեկան հանդէսի մը, զոր հրատարակած է Աշճեան:

Ս. Գաբամաճեան իր աշխատութիւններուն աղուոր թիւին վրայ վերջերս աւելցուց նաեւ հայերէն լեզուի «Պատկերազարդ նոր բառագիրք» մը, որ բախտն ունեցաւ արժանանալու Իզմիրեանց մրցանակին:

X

ՄԱՆԱՍԷ ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Բնիկ Սեբաստացի ուսուցիչ մը, որ երկար ատենէ ի վեր Պոլիս առանձնացած, ու առանձինն կ'ապրի:

Սուլթանեան բացի հայերէնէ՝ հմուտ է նաեւ գաղիերէն լեզուին ու գիտութեանց:

Իր Պոլսոյ ուսուցչական կանքը Գատըգիւղի Արամեանով կը սկսի, ուր մնայուն ուսուցիչ էր, յետոյ կը կոչուի Սկիւտարի Իճատիյէի դպրոցին տեսչութեան, հոս ալ երկու տարի պաշտօնավարելէ վերջ կանցնի Պէշիկթաշի վարժարանը, ուր 4-5 տարուան չրջանէ մը վերջ կը համաձայնի Սամաթիոյ վարժարանի Հոգաբարձութեան հետ, նոյն վարժարանին տեսուչն է այժմ Մանասէ Սուլթանեան, զրեթէ 3 տարիներէ ի վեր:

Գատըգիւղի դպրոցին ուսուցիչ եղած ատեն՝ Սուլթանեան, գրականութեան ջերմ հետեւող մըն էր: Այդ ատեն Ուղուրեանի

հետ՝ «Լոյս» չաբաթաթերթը հրատարակած է: Իր ստորագրութեան տակ գրած է վրան բաց ոտանաւորներու շարք մը, պատանեկան զգացումներով լեցուն, որոնք նոյն ատենուան հոգաբարձութեան ուշադրութեան առարկայ կը լլան ու կարգիլուի գրել:

Սուլթանեան, յետոյ աշխատակցած է նաեւ Բիզանդիոնի եւ այլ թերթերու, ունի կտոր րրդուճ գրուածքներ:

Մանկավարժական յօդուածներ հրատարակած է, ու յօդուածներու շարք մը ունի «Կրթական Մրազրի» մասին, ուր իր գործնականութենէ հեռու յայտնած գաղափարները, երբեք կարելի չէ իրականացած տեսնել:

Սուլթանեան իր դասատուութիւններուն մէջ վարվումն է, քիչ մը արագ խօսող, բառերու վերջին վանկը միշտ ուտող, բայց գիտէ իր դասերը հետաքրքրական ընելու գաղտնիքը:

Սուլթանեան նոր դպրոցի ուսուցիչներուն կը վերաբերի, ընդհանուր զարգացում մը ունի եւ հետամուտ է միշտ նոր մէթոտներու:

X

Ջրաքեան Տիրան, իրեն աւելի մասնագիտութիւն ըրած ըլլալով բնական պատմութեան գիտութիւնը, որոշեցինք՝ աւելի ճիշդ ըլլալու համար, գինքը դասաւորել գիտութեանց ուսուցիչներու դասաւորման մէջ:

Գալ անգամ պիտի ներկայացնենք Պոլսոյ մէջ հայ. լեզուն աւանդող ուսուցչաց Բ. դասակարգը:

ԼԵՒՈՆ

Երկու բարեկամներու մէջ.

— Ի՞նչ կայ, Պօղոս աղա, երեսդ կախեր ես:

— Ի՞նչ պիտի ըլլայ եղբայր, կնիկս մեռաւ, չօճուխներուս պէսչեմէ մը կը փընտռեմ կոր:

— Առջի բռնածդ ի՞նչ եղաւ, ան աղէկ էր:

— Ձգէ Աստուածդ սիրես նէ, աղէկ էր ամա, եկաւ չեկաւ կնիկս մեռաւ:

— Ոտդ պագնեմ, Պօղոս աղա, սա աղջիկը մեզի ղրկէ մէյմը:

ԳԻՏԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Համբոյրին վախճ

Ամերիկացի սրնգահար կին մը, որ վերջերս մեծ ընդունելութիւն գտաւ Լոնտոնի երաժշտական ակումբներուն մէջ, կը պնդէ թէ իր արուեստին ճարտարութիւնը մեծ մասամբ կը պարտի չհամբուրելու՝ բարի սովորութեան, նկատի առնելով թէ, ըստ իւր յայտարարութեան, համբուրելու գործողութիւնը չրթունքին ձեւը կը խաթարէ:

Ամերիկայի մէջ գոյութիւն ունի ուրիշ մարդ մըն ալ, որ երբեք չի հանդուրժեր որ զինքը համբուրեն, եւ այդ կէտին մէջ բոլորովին կոյս մնացած է: Ասիկա Տըվիին տղան է, այն անուանի ծխախոտարարին՝ որ երբեմն մեծ աղմուկ հանեց Շիկաքօյի մէջ, ուր Եսայի մարգարէին անունով՝ մեծ հարստութիւններու տիրացաւ:

Այդ խաբեբայ խաչագողին որդին է Կըլատստոն Տըվի, որ Քուպայի մէջ իր հօր հետ Աստուծոյ խօսքը քարոզելէ յետոյ, վերադարձին շոգենաւին մէջ գեղեցիկ դերասանուհիի մը կը պատահի, որուն անունը Սէքսթըն էր:

Այդ գեղանի օրիորդը տեղեկանալով որ Կլատստոն ռեսթորանի մէջ է համբուրուելու գաղափարին, գրաւ կը դնէ իր ուղեկիցներուն հետ, խոստանալով թէ ինքը, իր գեղեցկութեան շնորհիւ, պիտի յաջողի զխէս հանել այդ եղական մարդը:

Բաժանումի միջոցին, երբ երիտասարդ առաքեալը իր վերջին մնաս բարովը ըսելու կը պատրաստուէր, մեր աներես դերասանուհին խոյանալով Կլատստոնին վրայ, սերտիւ կը փաթթուի անոր վզին, բայց սուկաւին իր յանդուգն ծրագիրը չէր իրագործած, երբ արմուկի ուժգին հարուած մը կը ստանայ երիտասարդէն:

Ալ կրնաք երեւակայել այդ պահուն մեր դերասանուհիին յուզումը, մի եւ նոյն ատեն երիտասարդ Կլատստոնին զայրոյթը:

Օրիորդին կրածը լոկ բարոյական պարտութիւն մը չէր, այլ եւ նիւթական կորուստ մը, որովհետեւ գրաւը կորսնցուցած էր:

Հաշտարար ու բարեղէպ կարգադրու-

թիւն մը ընելու համար, յարմար կը տեսնուի Կլատստոնին ամուսնանալ Ամերիկացի սրնգահար կնոջ հետ: Այս կերպ ամուսնութիւն մը միայն կրնայ երջանիկ կացուցանել նմանօրինակ ամուլ մը:

• • •

Առաջին կենդանագիրը

Պլինիոսի մէջ կը կարդանք հետեւեալ հետաքրքրաշարժ տողերը, որոնք ուղղակի առնչութիւն ունին կենդանագրին ծագումին հետ:

Բրուտագործ Տիպիտադէսի աղջիկը նըշանուած էր յոյն երիտասարդի մը հետ: Երբ այս վերջինը հեռաւոր ճամբորդութեան մը պատճառաւ իր խօսեցեալէն բաժնուելու ստիպողական հարկին մէջ գտնուեցաւ, օրիորդը իր սիրելուն յիշատակը միշտ վառ պահելու համար, խորհեցաւ մատիտով ուռուագծել նշանածին դիմաստուերը, զոր լամբարի մը լոյսը կը ցոլացնէր սենեակին, պատին վրայ:

Հայրը իր աղջկան գծած ստուերական ծրագրին հետեւողութեամբ՝ փեսացուն դէմքին կաղապարը նոյնութեամբ քարով հանեց:

Կը կարծուի թէ այս միջադէպէն ծագում առած է լուսանկարչական արուեստը:

• • •

Ծխախոտին մուխը

Վստահ եմ թէ ձեզմէ շատերուն անծանօթ է ծխախոտի մուխին բաղադրութիւնը, ուր թէեւ արտաքուստ ուրիշ ծուխերէ տարբերութիւն մը չունի, սակայն ներքնապէս բաղկացած է քիմիական բաղմատեսակ տարրերէ:

Մարդիկ սակայն, ծխախոտին բաղմադիմի վնասները փորձառութեամբ ստուգելով հանդերձ, կամայ ակամայ անձնատուր եղած են այդ մոլութեան, վրայ տալով իրենց առողջութիւնը, մի եւ նոյն ատեն իրենց դրամը:

Ինչպէս գիտէք, նիքօթինը ամենափնասկար տարրն է ծխախոտի մուխին բաղադրութեան մէջ: Նիքօթինին վնասէն զերծ մնալու համար, վերջերս մէկ քանի ամա-

Թէօրներ փորձեր են առանց նիւթի ծը-
խախտ ապտրաստել: Թէպէտ իրենց փոր-
ձը մասամբ գոհացուցիչ արդիւնք տուած է,
սակայն չեն կրցած լիովին հասնիլ իրենց
նպատակին, քանի որ անկարելի է չէզոքաց-
նել ծխախոտի մոխիրն միւս ֆիւսակար
տարրերուն ազդեցութիւնը:

Ուրիշ առթիւ պիտի խօսիմ ծխախոտին
մարդկային ջերմութեան եւ շնչերակի զար-
կին վրայ ներգործած բնախօսական ազդե-
ցութեանց վրայ:

ՀՐԱՉԵԱՅ ՏԵՐՈՍԿԻ

ԽԵԼԱՅԻ ԱՂՁԻԿԸ

Մանչը

Ազուո՛ր, չըսի՛ր Թէ Բեճի կը սիրես
Մինչեւ ըլլալու աստիճան վերեւ:

Աղջիկը

Ըսիր սիրելիս, սակայն անօգուտ,
Երես տուող չեմ քեզ պէսին անկուտ:

Մանչը

Բայց ո՛վ ըսաւ որ չեմ բռներ ես կուտ,
Ոսկի՞ Թէ արծաթ Թափեմ քու գլխուդ:

Աղջիկը

Ի՛նչ պարապ խօսքեր կ'ընես, յաւակնո՛տ,
Գիտեմ գրպանդ քանաեան անօթ:

Մանչը

Չգիտեմ ինչո՞ւ սիրտդ այդ բարի
Դարձեր է այսօր ցուրտ մէկ մարմարի:

Աղջիկը

Ի՛նչ, գովեմ ըզքեզ, ձագըդ սատանի,
Որ ետքը փորձս նօթի տատանի՞:

Մանչը

Կը պաշտեմ քեզի հուրիդ երկնային
Տե՛ս, աչուկներդ ալ ինծի կը նային:

Աղջիկը

Սխալ դուռ զարկեր ես պարօն ազնիւ,
Մարդ ոչ կեցցէ լոկ բանիւ, այլ հացիւ:

Մանչը

Եկուր չար աղջիկ, ինծի ա՛յն մ'ըսեր,
Նայէ՛, քեզ կուտամ ամբողջ սիրտ մը սէ՛ր:

Աղջիկը

Թէ կուզես վայել զիս, հուրիդ բարի,
Գնա՛ աշխատէ քանի մը տարի:

Մանչը

Էհ, ալ մեր մէջը կադ ու վէճ հատին,
Բե՛ր, մատդ դընեմ նշանի մատնին:

Աղջիկը

Հիմակ որ հոգի՛ս, ա՛լ նըշանուեցանք,
Է ինձ սպասել, քեզ աշխատիլ, անկ:

Մանչը

Անանկ է նէ տո՛ւր նայիմ սուրբ պաշիկ

Աղջիկը

Չէ՛, չըլլար, ամօթ է միւսիւ Խաչիկ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ Ա. ՏԵՐՈՒՆԵԱՆ

Մ. Խ. — Այս գեղեցիկ քերթուածին
Ա. տպագրութիւնը բոլորովին սպառած ըլ-
լալով, այս երկրորդ տպագրութիւնը իւրյս
ընծայեցինք, հիմնովին բարեփոխուած եւ
ճոխացած:

ՍՐՏԻ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ

Ո՛ւր փնտնէ տուայտանիս վերջակէս,

— Մահուա՛ն հե՛ս ...:

Ի՛նչ կը քրքռայ կոյսին շանջիկն սակ գեղուն.

— Սի՛րս քեղուն ...:

Ո՛ւր կը գտնես, եռանդ, աւիւն, խանդ անշեջ,

— Սիրո՛յ մեջ ...:

Ո՛վ կուտայ մեզ պարգեւներուն սխրային,

— Միա՛յն կի՛ն ...:

Ե՛րբ կը փառնի սարփոս համբոյր մը կոյսի,

— Թե՛ խուսի՛ ...:

Ո՛վ ուռճացուց հիւքեղ կոկոնն սեր-ծաղկին,

— Դարձեալ, կի՛ն ...:

Շիկնո՛ս կոյսին այտերն ի՛նչպէս կը շողան,

— Ձերք շուշա՛ն ...:

Ո՛վ կրնայ սալ հանգիստ, յոգնած մեր կեանքին,

— Անշո՛ւշ կի՛ն ...:

Բայց ո՛ւր գտնէ քո՛ւն կեանքն անհա՛ն ու

անվերջ,

— Երկնի՛ց մեջ ...:

Տրապիզոն

ՅՈՎՀ. Գ. ՊՕԶՄԱՆԱՆ

Մ Օ Ր Ը Խ Ր Ա Տ Ը

Ընտանեկան արդի բարոյական ու նիւթական ոչ նախանձելի կացութիւնը եթէ անգամ մը հետաքրքրութեամբ քննական բովէ մը անցնենք, պիտի կրնանք հոն, այդ խաղաղ ու անդորր կեանք մը բոլորելու համար սահմանուած միութիւններու մէջ, նըշմարեւ այն տաժանելի ու դժոխային վիճակը, որմէ ողջամիտ մէկը պիտի խորչէր, պիտի զանկր, արդահատանքով մը:

Ընտանեկան ամէն գայթակղութեանց պատասխանատուութիւնը գրեթէ ամէն պարագաներու մէջ կին էակին վրայ է որ կը ծանրանայ, քանի որ կինը կոչումը ունեցած է ընտանիքին պահապան հրեշտակը համարուելու, եւ կամ այսօրուան կարգ մը ջլդիկներու պէս ընտանիքի կործանարար սատանան:

Մեր կիները ընդհանրապէս, կապկորէն կը հետեւին այն ամէն ստոր ու կործանիչ սովորոյթներու, որոնք մեծապէս կը փնասեն մեր նիւթական, բարոյական ու ֆիզիքական կեանքին, եւ ընդհակառակը ամենէն կարեւորը, ամենէն պիտանիները, ոչ թէ միայն նախատելով կը վտարենք մեր մէջէն, այլ եւ նոյն իսկ չենք ալ զիջանիր շատ մը փորձութիւններէ վերջ զղջալ այն ամէն ծուռ ճամբաներուն վրայ, ուր կը գտնուի արդի նորահաս սերունդը, թէպէտ եւ անգիտակցարար:

Ամուսնութեանց օր քան զօր նուազումին յանցանքը կը վերագրուի երիտասարդներուն, որոնք իրր թէ չեն ուզեր ամուսնանալ, եւ այս գանգաւոր միշտ ու ամէն ուրեք, առանց սակայն պատճառը որոնելու:

Ի՞նչ պիտի կրնայինք յուսալ արդէն իսկ կատարուած ամուսնութիւններէն, որոնք բարոյական դաստիարակութենէ շատ հեռու, նկատուած են չահու աղբիւրներ միայն արտաքին չպարով մը զարդարուն:

Այն լղրճուկ ու ջլդիկական ամուսնութեանց մէջ, մէկդի թողլով կարգ մը միջնորդ կիներու վատ ու մոլի արարքները, փոխան ֆիսթանի եւ կամ մատնիի մը, աւելի ուշագրաւ կէտը կրնայ նկատուիլ մայրական ազդեցիկ խրատը: Անոնք իրրեւ

ճշմարիտ մայր, իրրեւ հաւատարիմ երկըրպագու իրենց պարտականութեանց, կը խըրատեն, կը համոզեն իրենց աղջիկ զաւակները, որպէս զի յետ ամուսնութեան լքեն կեսուր մը եւ կամ տալ մը, անկախ դիրքի տիրանալով, ինքնագլուխ կեանք մը անցնելու համար:

Ահա՛ ասկից ծագում կառնէ ընտանեկան տպերջանկութիւնները:

Աւելորդ է հոս ներկայացնել այն ամէն տխուր դրուագները, որոնց իրականութեան մէջ ամէն օր կը հանդիպինք ընտանիքի երդիքներու տակ, եւ որոնց հեղինակը կը հանդիսանան արդի նորահաս սերնդեան ներկայացուցիչ եւայի թոռնուհիները, անսաղով կարգ մը ջլդիկ մայրերու այն խրատներուն, որոնք մէյմէկ թունալից բաժակներ ըլլալը ի յայտ կուգան գործնական կեանքի մէջ:

Ինչո՞ւ սակայն այս անտանելի ու քրտմնեցուցիչ արարքները:

Ամուսնութեան բուն նպատակը դեռ լիովին ըմբռնելէ շատ հեռի՛, նոյն իսկ մայրեր, վաղ կամ անագան իրենց ձեռքէն հանել կը տենչան այն ծախու ապրանքները, որոնց ներքեւը մեծագոյն մասամբ առկի է թունալից ժահրով մը, որոնք ամուսնութեան վերջ կը ժայթքեն շատ մը խաղաղ ու պատուաբեր ընտանեաց համերաշխութիւնները խանգարելով:

Բայց, ազնիւ քոյրերս, արտաքին փայլով, սին ու փուճ զարդարանքներով, անվայել ծիծաղելի քալուածքներով եւ կամ չեմ գիտեր... ինչերով, չէք կրնար հասնիլ ձեր այն երազած կեանքին, զորս, նոյն իսկ դո՛ւք, ձեր ձեռքերով կը հեռացնէք ձենէ:

Ամուսնական կեանքի երջանկութիւնը վայելողներ մեր մէջ շատ հազուադիւտ կը գտնուին, եւ պատճառը միայն պիտի կըրնայինք վերագրել իրագան դաստիարակութեան յոռի աւանդումներուն, որ մեր մէջ արմատացած է:

Սիրելի քոյրերս, պարզութեան, համեստութեան եւ առաքինութեան շնորհիւ միայն պիտի կարողանաք խաղաղ ու երջանկաւէտ կեանքը ըմբռնել, նուիրելով ինքզինքնիդ ձեր ընտանիքին բարոյական ու տնտեսական զարգացման:

Գ. Կ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

ՍԱԹԸՃԻ ՄՈՍԻԿԻ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ

(ԶԼԴԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ)

Երբ ամուսնանալու համար հարուստ ըլլալ պէտք ըլլայ, այն ատեն թէ՛ աշխարհիս բնակչութիւնը հետզհետէ կը նուազի եւ թէ՛ աղքատախնամները տարին մէկ մէկ արարքը մաններ կը չինեն, ու երբ ամէն ամուսնացող աղքատ ըլլայ՝ այն ատեն ալ աղքատի մը 10 փարայ տալու կարողութեան տէր մարդ մը չի գտնուիր:

Բայց քանի որ շատ անգամ ո՛չ հարուստ ամուսնացող մը երջանիկ կրնայ ըլլալ եւ ոչ աղքատ ամուսնացող մը թշուառ, հետեւաբար կը կարծենք թէ ամուսնութիւնը աղքատի կամ հարուստի սեփական չէ, ուստի բնաւ իրաւունք չունինք մեղադրելու մեր սաթընձի Մոսիկը, որ վստահ իր կնիկ մը պահելու չափ ունեցած կարողութեան վրայ, ամուսնանալու որոշում կուտայ, քանի որ իբր սաթընձի՝ աւուր պատշաճի ինչ ապրանք որ թիացան կանցնի ան կը ծախէր, ու օրական տասը բոլորին գլուխը միշտ կը զարնէր, չը մոռնանք ըսել որ՝ Պ. Մոսիկ հակառակ իր պաշտօնը չը պահաւորեալն, շատ ծանր գլուխ ու խնայող տղայ մըն էր, եւ իր այս խնայողութեամբ մէկ քանի տարուան մէջ կրցած էր իր միակ մօրը հետ մէկտեղ ուտել խմել ու ապրելէն վերջ երեսուն ոսկի մըն ալ աւելցնել, որ զայն մօրը սնտուկին մէջ ամենայն զգուշութեամբ ի պահ դրած էր:

Առաւօտ մը Պ. Մոսիկ, որ կերեւայ թէ ինքն իրեն ամուսնանալու որոշումը տալէն ի վեր շատ մտածկոտ ու անհանգիստ էր, դառնալով մօրը, որ զակին համար շատ կանուխ կելար, ըսաւ.

— Քա տուտու, քեզի պան մը պիտոր ըսեմ ամա կիւճէնմիջ չըլլաս:

— Ի՞նչ է օրթտի, ըսէ նայիմ, ինչու կիւճէնմիջ ըլլամ, մեղայ Աստուծոյ, մինչեւ հիմայ զէհէր ինծի օր մը կիւճէնտիրմիջ ըներ էիր:

Բ

— Չէ տուտու, քեզի կիւճէնտիրմիջ ըրած չունիմ, չունիմ ամա, ասանկ պան ալ ըսած չունիմ:

— Վո՛ւյ Սուրբ Աստուածամար, աճապ ի՞նչ է օրթտի, քէֆ մի չունիս, ի՞նչ:

— Չէ տուտու չէ, քէֆս մէֆս տեղն է, մինակ ու պիտի ըսեմ քի, աս ասանկ սօնէրնիս վուր պիտոր էրթայ, դուն ալթըխ էխտիեարցար, էս ըսես նէ կիտէսքիմ ալ էկայ հասայ, սանքի ըսել կուզեմ քեզի, հօշ կէնէ դուն կիտես ամա, սանկ ինծի մէկ հիլ ուշադի մը առնես տէ, հէմ քեզի ալ եառտախ ըլլայ նէ, նա՛սը կըլլայ աճապա:

— Աղէկ ըսիր օրթտի, էս շատոնց է քիմ ատ պանը կը մտմտամ կոր ամա, հիմակ ուան զանցային աղջիկները բէք քիթս չը պոններ կոր, իշտէ ատոր համար է քիմ պերանս վրայ չերթար կոր ըսելու:

— Քա տուտու, աս աղջիկներուն ամէնն ալ կէշ չէն ա, ուշարսա բազարմ. ուշմազսա պօզարմ, էս թռախօմա ֆիլան չեմ ուս գեր կոր, եալանճըգտան ինքըզինքս զէնկին տէյի չեմ կլեցուններ կոր, իշտէ օթթան մարդ մըն եմ, ամէն օր մահալլէն եմ, ինչ կտնամ ան կը ծախեմ, հացիս բարան կը հանեմ, ինծի խանահաթ կընէ նէ թող առնէ, չէնէ ինք կիտէ, զօրմ եօգ:

Վերջապէս մայր ու տղայ յետ երկար խորհրդակցութեան՝ կորոչեն որ Պ. Մոսիկին մայրը Կուսիկ տուտու, երթայ իրենց թաղը բնակող Կատար տուտուին աղջիկը Աստուծոյ հրամանովը ուզէ:

Հետեւեալ օրը Կուսիկ տուտու բանալով իր ճէհէզին մէջիկն սնտուկը, կը հանէ իր ամբողջ արդուզարդը ու քօշէլի խաբաթման գլուխը կապելով՝ շիտակ Կատար տուտուէնց դուռը չաթ չաթ:

Օր. Վերոն, պատուհանէն նայելով ու չը ճանչնալով Կուսիկ տուտուն, քա մայրիկ, սեւերով կէնճ մըն է ամա չի ճանչցայ:

— Բա աղջիկ, քաշէ դուռը, ո՛վ կուզէ թող ըլլայ:

Դուռը կը բացուի ու Կուսիկ տուտու սանդուխներէն վեր ելնելով՝

— Աչկերնիդ կը պաղե՞ր կոր աճապա:

— Հրամայեցէք, աս ո՞ր հով փչեց, դուք ալ հոս կուգայի՞ք մի:

— Էյ քուրուկ, տաղ երբիւմէսէ ապտալ երբիւսին կըսեն, իշտէ էս ալ անանկ էղայ:

Սովորական անուշ խահվէ հրամցանէն վերջ, Կուսիկ տուտու կամաց մը Կատար տուտուին ակնջն ի վար:

— Քուրուկ, ճահիլը քիչ մը օտայէն դուրս հանէիր տէ մինակ մնայինք:

Կատար տուտու աղջկանը:

— Վերոնի՛կ, հայտէ կընա վար տէ նօ-հուտը ստըկէ թռչոցը տիր քիմ, իրիկուան հարըդ կայ նէ ծեծէ, սօխն ալ պարակ մը ճարթէ:

Օր. Վերոն, ամենայն հնազանդութեամբ կերթայ մօրը հրամանը կատարելու, երբ երկու էսկի մարգարիթներ մինակ կը մնան, Կուսիկ տուտու խօսք առնելով:

— Քուրուկ նասը քիմ կիտես, չիւնքիմ մէկ ծարը կլտիդ է, շատ միւշկիւլ պան է ճահիլի տէր ըլլալը, ամէն պաներնին պիտի մտմտաս, ինտոր որ քիմ ամենուն կիտցածն է, Մօսիկս իշկիւզար բիծին մէկն է, քարէն հաց հանող, մէվսիմին կէօրէ պան կը ծախէ, խապախին վախիթը խապախ, խըյարին վախիթը խըյար, կաղնտին սիմիթճուրիւն, բարեկենթանին բախլավաճիուրիւն, հիմակ ալ մեծ պաք ըլլալուն՝ ամէն օր քառսուն հատ խուռուշնոց, քառսուն հատ ալ քսաննոց թահանլը թօփիկ կը ծախէ քիմ, տէյ-մէսին չը կրնար ծախել, չիւնքիմ միւշտէրին բէք շատ է, հէմ մէթ ընել չըլլայ, նէ ըռախի ունի նէ թիւթիւն, վաստակը բիւթիւն ավուճս կը լեցունէ, հիմա սա ըսել կուզեմ քիմ, էյէր Աստուծոյ հրամանովը աղջիկնիդ տղուս տաք նէ, ունմիշ կընեմ քի աղէկ կըլլան, չիւնքի կիտեմ քիմ Վերոնիկս ալ ալլըման էվճիմէն աղջիկ մըն է, թամ ալ տղուս խարճն է:

— Իմ ալ Վերոնիկս, մէթ ընել չըլլայ, իշտէ օւթան է, գազալը ճահիլիկը տունի

խըզմէթները թէքմիլ ընեցն սօղրամ կառնէ տիվալը կը նստի, մինչոկ կէս գիշերներ կը պանի, դուրս մը էլած չունի, անխըտար ըսեմ քիմ, էյէր սօխախ էլլայ տէ սա քէօ-չէն տառնայ նէ խայիպ կըլլայ, հօշ ինչ ըսեմ ասոնք թիւթիւն դուռ դրացիները կիտեն:

— Իշտէ ատոր համար է քիմ քուրուկ մենք ալ ճէսարէթ ըրինք տէ արզու կընենք կոր, գէրէ հիմակուան ան տրպատուններէն էլած սըչանավար աղջիկները մէրին գործին չի գար, անանկ տարին չորս շափխա չորս ֆիստան, անկէց վիրա պե՛ր, պե՛ր ըսողները մեզի համար չեն, ինք վրայ պէրող ըլլալու է:

— Բէկ աղէկ քուրուկ, ինծի մնայ նէ աղէկ կըլլայ ամա, իրիկուան մէյմը հօրը տանըլմիշ ըլլամ տէ քեզի խապար կընեմ:

×

Թէ տարիքով, թէ աստիճանով, եւ թէ ֆիզիքական տեսակետով յարմարած ըլլալուն, տարի ու կէս կար որ անոնք ամուսնացած էին:

Բայց այս անգամ անքրճի Մոսիկը պատուաւոր խանութպան մը եղած էր, ու Վերոնիկն ալ թոմպուլիկ մանչու մը մայր ու կապրէին անոնք խաղաղ ու անդորր, Մոսիկի զբաղումն էր միայն իր խանութը, իսկ Վերոնին միայն իր ընտանեկան յարկը, ու երբէք աշխարհային պճրանքն ու պչրանք զինք չէին վրդովեր, զի իր էրկանը պէս ինքն ալ խնայող մը ըլլալուն միայն ստիպողականին ու անհրաժեշտին կը ծախսէր, իսկ հաճելիին ու աւելորդին երբէք:

Ու սաթըճի Մոսիկ՝ այսօր Մոսիկ աղա մը եղած էր:

Հետեւութիւն. — Երբ կին մը իր էրկանը վաստակին չափովը կը շարժի, այն ընտանիքը երբէք թշուառ չըլլար, եւ երբ կին մը ուզէ չինել իր ընտանեկան յարկը՝ անպատճառ կը չինէ: Ուրեմն տանք մեր աղջիկներուն ընտանեկան կրթութիւն ու սովորեցնենք անոնց ու խնայողասիրութիւն, եւ ոչ թէ՛ երբ կարողութեան տէր ենք, վարժեցնենք զանոնք զեղխութեան ճիտտայութեան, ընելով ամէն տեսակ պչրանք ու զարդարանք, ու ցուցադրելով զիրենք իբր-մօսքացու ապրանք:

Մնամ եղած տեղս
ԵՐՄՈԳ

ԿԻՆԵՐՈՒ ԲԱՂՆԻՔԸ

Ապօշխարութեան այս օրերուն մէջ, մա'րդ Աստուծոյ ըսէք թերեւս, գրելու նիւթ չի գտար ու այս վերնագիրը ընտրեցիր: Սակայն ինչ կուզէք որ ընենք, քանի որ մեզի հիւրընկալող թերթը — իր սկզբունքը յարգելով — ուրախ յօդուածներ միայն կը պահանջէ մենէ:

Վստահ եմ որ եթէ մեծ պահոց վրայ երկար տեսութիւն մը ընէի, այն ատեն յօդուածս փոխանակ Պ. Գրաշարին՝ զամբիւղին պիտի յանձնուէր:

Տրուած այս կարճ բացատրութենէն յետոյ, շարունակենք մեր ըսելիքները, նկարագրելով մի եւ նոյն ժամանակ կարելի եղածին չափ անցած ու դարձածը:

Ուստի տեսնելի մը չափ նուիրական է բաղնիքը կանանց համար, քանի որ եթէ առաջինով հոգինին կը մաքրուի՝ վերջինով ալ մարմիննին է որ նոյն բաղնիքին կարծանանայ:

Կիները՝ բաղնիք պիտի երթանք կ'ըսեն աղօթատեղի մը երթալու չափ երկիւղած, եւ վա՛յ այն էրիկ մարդուն որ կնոջը այն փափաքին կը հակառակի:

Կիները ամբողջ տարւոյն չըջանին մէջ առնուապէն քսան անգամ բաղնիք կերթան, եւ դժուար է գտնել կին մը որ ամբողջ տարւոյն մէջ նոյնչափ անգամ եկեղեցի գացած ըլլայ:

Բաղնիքը եթէ շատ բազմութիւն ըլլայ, կիները կը նեղանան ու երկու օր յետոյ նորէն երթալու պէտքը կ'զգան, իսկ եթէ քնաւ մարդ չ'ըլլայ՝ նորէն կը ձանձրանան, խօսակցութեան ու քաջընկերի նիւթ մը գրտած չ'ըլլալուն համար:

Բաղնիք երթալէն շաբաթ մը յետոյ, երբ առաջարկէք ձեր կնոջը թէ՛ թատրոն երթալ կուզէ չէ թէ բաղնիք, մի տարակուսիք, որոշումը վերջինին պիտի տրուի, ասոնք գիտնալով հանգերձ, մէյ մ'ալ ելլել ըսել թէ՛ «մեր կիները մաքրասէր չ'են»:

Ենթանդրենք թէ այն ինչ տիկինը վաղը բաղնիք պիտի երթայ, այսօրունէ պզտիկ

աղջկանը հետ կ'ազդարարէ ազգականներուն ու բարեկամներուն, որպէս զի անոնք ալ չի գրկուին այդ զուարճութենէն:

Կիները բաղնիք գացած օրերնին եթէ ոչ իրենց toiletteին, գոնէ ուտելիքներնուն շատ հոգ կը տանին, այնպէս որ աւանդական եսօրախ սօլմասին եւ կամ բարդիման սօլմասին անպակաս պիտի ըլլայ, (հապա շահանա քուռշուսին, պիտի ըսեն հիմայ կին ընթերցողներս) իբր թէ Այնմտաղի եւ կամ Կէօքսույու պտըտելու կ'երթան կոր:

* *

Ուստիկ տուտու, մէկ հատիկ աղջկանը Տիւրիւկին հետ բաղնիք երթալու փափաք մը կ'զգայ, իմացած ըլլալով որ Միւսիւ Գասպարին ընտանիքն ալ հոն պիտի գտնուի, որուն հետ արդէն մտերմացած էր սուրառի մը մէջ, եւ կ'ուզէր իր աղջիկը տալ անոր:

Առտու մը կանուխ, մինչ ամուսինը՝ Աստիկ աղա, իր սուրճը եփելու զբաղած էր, տիկին Ուստիկ սանկ նեկլիժէ քուալեքով մը սենեակ կը մտնէ ու այլ եւ այլ նիւթերու վրայ խօսակցելէ յետոյ, վերջապէս կը հասկըցնէ բաղնիք երթալու դիտաւորութիւնը, ու նաեւ անհրաժեշտը եղող ուտելիքներու պէտքը:

Աստիկ աղա, որ մինչեւ այդ ատեն քիչ մը ուրախ կ'երեւէր, յանկարծ յօնքերը կը կախէ, որուն ի տես՝ Ուստիկ կ'աւելցնէ:

— Մեղայ, ըսէ, Աստիկ աղա, զէյէր ըլլալիք պան է, օղորմած հոգի մօրս վախիթէն ասանկ տեսեր եմ, ինչ ընես ըրէ՞ կէս օխա բրինձ իլէն 50 տիրէմ եսօրախ խրկէ, զէյթին եաղին իլէն սօխը չի մոռնաս հա . . . :

— Հայտէ կնիկ, առտուանցով ինծի մեղքը մի խօթեր կէնէ, մօրդ վախիթը խօռօղը պիլէ հաւկիթ կ'ածէ եղեր, հիմայ էս պաղնիքին բարան կը մոմտամ կոր, դուն իսէ էլեր էս աշխըրքին բարային դուռը կը պանաս կոր կլտուս . . . :

— Զ'իյտեմ իշտէ, եանի չ'ըլլայ նէ պզ-

տիկութիւն կ'ըլլայ, զէրէ Միւսիւ Գասպա-
րիկին էթնաֆն ալ հոն պիտի ըլլայ, ինչո՞ւ
ինքզինքս պղտիկ ցուցնեմ անոնց քովը . . . :

— Քա՛, տա Գասպարիկը ո՞վ կ'ըլլայ
կոր նայինք . . . :

— Խեղբէ՛ տուն պէր, մուցար զէյէր,
սա վո՛ւր է հերու Տիւրիւհիճային համար
ըսի նէ . . . :

— Քա թէվէքէլի չէ քի շաշիւն էք կ'ը-
սեմ եա, սա բիւճային անանկ տօլմաներով
աղջիկ առնող բէք խըթ կը տեսնամ կոր էս
եալքում . . . :

— Թող ըլլայ ամա, ինչո՞ւ համար չու-
նին ըսել տամ, եանի ինէ էվէլ աղջկանդ
սիրտը կը կոյրի, զաթը աս տուա բէք տըռ-
լանմիշ էղած կը տեսնամ կոր . . . :

— Տահա սուվառէ չի կայ քի տանիս,
ալլաւէմ քի ատոնց պէլան սօնը պիտի քա-
չենք . . . :

— Մարդս մարդով կ'ըլլայ, հէլպէթ ա-
տանք տեղեր պիտի էրթայ քի տեսնող մը
ըլլայ տէ պէճէրուի տէի . . . :

— Քա կնիկ, պէճէրուի ըսենիքէն տա-
կէն պաշխա պան կելլայ կոր, չի նայիս Գաս-
պարիկ մը ելաւ նէ՛ Ժարը Աստիկին քէսէին
կը դպի կոր . . . :

— Աման դուն ալ, հիշ ճահիլի հալէ չես
հասկնար կոր, սա քուկին ճահիլ վախիթդ
աչիկ առջեւ պէր տէ անանկ զուրցէ, հայտէ
պէրանս պանալ մի տար, դուն չէյիր քի
ինծի առջի տեսած օրդ զօռովէն էրէսս պագ-
նել ուզեցիր նէ, հայտէ կոցէ՛ . . . :

Նոյն միջոցին օրիորդ Տիւրիւհի քունէն
արթնցած կերեւայ սենեկին դրան առջեւ,
Մայրը զայն նշմարելով խօսքը կը փոխէ .

— Քուզում Աստիկ աղա, ըսածներս չի
մոռնաս հա, երկու տիրէմ ալ չէյրէկիք
պոյա առնես, զէրէ մազերս ճերմկցեր է .

— Օ՛խ, եէտիի հալթա պագ, իշտէ ատ
էր պակաս, ատ տարիքէդ ետքը չի խըպ-
նածտան էլէր էս մազերդ պոյալամիշ կընես
կոր հէ՞, ամօթ է քա ամօթ, պոյիդ կէօրէ
աղջիկ ունիս . . . :

— Քա ինչո՞ւ ամօթ պիտի ըլլայ, սըվոր
նայէ հէլէ, ինէ տահա էթիյարները կը
դնեն կոր, էս վուր մնացի . . . :

— Խուշս, քեզի էթիյար էս ըսող կայ
մի եա, աէր ողորմեա, կեցիր նայինք տահա,
թագէ բախլան էլլա նէ դուն ալ զաննրմ
էստուն վէրկուքը կը լմնցնես էստուն վիրէքը
կը մոնաս . . . :

— Չի կանանչնանք կէնէ, էս ի՞նչ կըսեմ
կոր նէ դուն անոնք պէրէլդ նայէ, հէմ ճա-
նըմ մենք ծերին դործին կը խառնուինք կոր
քի դուք ալ էլէր էք կնիկճէ պաներուն խելք
կը հասցնէք կոր . . . :

— Պէ եալքում, աղէկ, խելք չի հասցը-
նենք ամա, Ժարը ինծի կը դպի կոր, խա-
պար էս, մինչեւ իրիկուան վաստակս քու-
կին պոյայիդ բարան պիլէմ չ'ըլլար, հէմ
կնիկ, քեզի պան մը ըսեմ, տօլման միտէի
բէք կը դպի էղէր, անցած օր Տարսավիչին
կնիկը, չիմացա՞ր, պաղնիքէն տուն էկէր
հիւըտցեր է, հէքիմ ֆիլան ըսենիքէն, զա-
վալը կնիկը նալերը տնկեր է, ետքը էս ինչ
ընեմ, թօփը թօփը կնիկ մը ունիմ նէ,
սօնրա՞ . . . :

— Տէ, ատանկ պօշ լախըրտըներ մտիկ
ընելու հիշ վախիթ չունիմ, պան մը իմացեր
էս ամա, չիտակը չ'է, անիկա տօլման չ'է
հիւըտցեր, հայտէ հիմա չեմ կրնար զուր-
ցեր .

Աստիկ աղա տեսնելով որ չպիտի կարե-
նայ գլուխ ելլել կնոջը հետ, եւ միւս կող-
մանէ ժամանակը բաւական անցած է, ուս-
տի խոստանալով երեկոյին բերել ապսպըր-
ուածները, կը մեկնի տունէն լուտանքներ
տեղացնելով կնոջը գլխուն .

Եւ որպէս զի ընթերցողներս ույսռւումս-
սիօն չի կարծեն, գոնէ բոլոր վերի գրած-
ներս, ուստի զանց կ'առնեմ նկարագրել
բաղնիքին ներքին կեանքը, քանի որ երբէք
չպիտի կրնամ ներկայացնել ականատեսի մը
գրչով .

ՆԵՐՇԱՊՈՒՀ (*)

(*) Ծ. Խ. — Յաջորդ շարթու «ԱՂ-
ՋԻԿՍ ԱՆՈՐ ՉԵՄ ՏԱՐ» վերնագրով խիստ
ծիծաղաշարժ յօդուած մ'ալ մեր զաւեշ-
տագիր-աշխատակից ՆԵՐՇԱՊՈՒՀէ :

ՀԻՆ ԷԶԵՐ

Բ.

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հաստատված Ա.

Յարեւմտից կողմ աշխարհին գեղեցկատես
կղզեակ մի կայ,
Իմանալի մըտաց մարդկան որ վանատիկ
ասին նմա,
Մալ ու խազնին հըսապ չը կայ, գեղեցկա-
չէն նման չը կայ,
Աղուոր տուններ եւ դարպասներ (1) տեսա-
նողքն ամէն ապուշ մընաց:
Այլ եւ նաւերք ի վերայ ծովուն երթեւեկեն
համար չը կայ,
Զ'Սամարթոյին (2) մալըն կրեն գընեն ծախեն
կոմքուկ չը կայ,
Քըսան ու չորս հազար դըրուշ ամէն աւուր
կալուքըն (3) կայ,
Զերկոտասանըն կու մըսխեն եւ երկոտա-
սանըն կ'աւելնայ:

X

Հաստատված Բ.

(Կանանց համարձակութեան վրայ)

Ոսկի զանճիր գօտի կապեն որ մէկ հոգգայ
աւելի կայ,
Մարգարիտէ մաւթուլ ունին քանց զծիծ
ըռան հաւկիթ մեծ կայ,
Փատէ փապուճ մի հագեր է երկու թըզէն
աւելի կայ:
Երկու խըզմէթ քեար առջեւն ունի ձեռու-
նին ձգեր ուսին վրայ,
Քան զամէն մարդ բարձր երեւի որ ամէն
մարդ զինքն տեսնայ:
Կամկար (4) Կամկար քայլափոխէ մէկն ալ
երեսին հով կուտայ,
Ըղտոյ երամ կու նըմանին եւ լրբաբար ի
ժուռ կու գայ:

X

- (1) Դատարան:
(2) Ս. Մարկոս:
(3) (Կելիքաք) հասոյթ:
(4) Սիգալով:

Հաստատված Գ.

(Ճաշեղու եւ շուն պահեղու վրայ)

Յորժամ որ կերակուր նըստին, թէ աշխար-
հական թէ հարեղայ,
Զձեռաց պատառն շանըն տայ, եւ կու
նստի ծընգան վըրայ,
Ըզկերակրին աւելորդն ամնովն (1) առջեւ
դընէ նորա,
Հանցեղ (2) մաքրէ թամիզընէ, լուանալու
մուկնաք չը կայ:

X

Հաստատված Դ.

(Բարեկենդանի նկարագրութիւնը)

Բարկենին գառնաւալ ասին մեծ ու փոքր
կու խենդենայ,
Յորժամ որ ծնունդըն անցանի, բարկենդա-
նըն ըսկսանի:
Մեծ ու փոքր սուրաք դընեն բազում կեր-
պով առասպէլի
Այն մեծ չըբիոնաց (3) կանայքն ազգի ազ-
գի սուրաք հագնին,
Ազգի ազգի կերպ կու մտնեն կուգան ի
ժուռ մէջ փողոցին:
Ի փիացայն տեղ չի մնայ սուրաթ պան-
նուն (4), հոգգապազնուն
Այնչափ մարդիկ կուգան կուտվին (5), տեղ
չի մնայ քայլափոխի:

Ծանօթութիւններ. — Ոտանաւորիս հե-
ղինակն է ԽԱՉԱՏՈՒՐ ՔՂԵՅ. ԵԹՈՎՊԱՑԻ,
որ 1500—1600 ի աւտենները հաւանականա-
բար այցելած է Եւրոպա:

Հեղինակը ծաղրական տողերով կը նկա-
րագրէ նոյն տոտենի եւրոպական քաղաքա-
կըրթութիւնը, եւ իր նողկանքը չի կրնար
զսպել ի տես եւրոպացի համարձակ կանանց:

Ոտանաւորիս ամենէն հետաքրքրաշարժ
եւ զաւելտական տեսակէտէն, կարելոր մա-
սերն է որ հրատարակեցինք: Միւս մասերը
ուսուցիկ ոճով կրկնութիւններ են պարզա-
պէս:

Լեզուն՝ նախնեաց ռամկօրէնն է եւ իր
մէջ կը պարունակէ աշխարհաբարի գեղեցիկ
տարրերը:

ԳՐ. ՀԱՄԲԻԿԵԱՆ

- (1) Ամանովը:
(2) Անանկ մը:
(3) Ազնուականաց:
(4) Դիմակաւոր:
(5) Դիզուին:

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Պատ. Փռնը լրագրոյ էջերնէի
քղրակցունի օրհորդին

Ակններեւ գիտենք թէ տգէտ օրհորդներու դասակարգը, բացառութիւններն յարգելով, չ'կրնալով իր թոյնը ուղղակի ժայթքեցնել Օր. Վարդուհի Մէրամէթճիեանի երեսին, անոր ճշմարտախօսութեանը պատճառաւ, իւրինց իմաստակ եղբայրներուն պաշտպանութեան ապաստաններ են, որոնցմէ մէկ քանի տգէտ պարոններ համախմբուելով Փռնըի թղթակցութիւն անուան տակ յօդուածներ հրապարակ հանած են, չեմ գիտեր թէ որո՞ւ գրել տուած են, և որուն մէջ կերեւի իրենց լորձունքը:


Չեր վերլուկները ազդեցութիւն չունին, քանի որ սոսկալի նախանձի արդիւնք է, և յայտնի կերեւի թէ՛ նիւթին թափանցել ուղեւէն աւելի, միւսիսն ձեր ցատումին յագուրդ տալ ուղեր էք, նախատալից տողեր ուղերով յիշեալ օրհորդին հասցէին:

Օր. Վարդուհին՝ ապացուցանելու համար իր կարողութիւնը պէտք է եղեր անմիջապէս պատասխանել: Կարդացէք «Ծաղիկ» ի 20րդ թիւը, ահա անոր ձեզի տալիք պատասխանը: Որքան բորբոքիք, որքան ալ սրտնեղիք, բացայայտ ճշմարտութիւն մ'է գրուածը:

Դո՛ւք, պարզապէս ձեր քոյրերուն և կամ ազգականներուն ջատագով ըլլալով՝ կարծած էք սովորական մակարդակէն վեր բարձրացնել զանոնք: Չափազանց միամիտ էք: 12-13 տարեկանէն դպրոցէն ելած տղոցմէն ի՞նչ կ'սպասուի, ասոնք տխուր իրողութիւնն են, ինչպէս որ 8-10 տարի առաջ ողբացեալ ուսուցիչ Դաւիթ էֆ. Սարգիսեան (Էտիրնէի վիճակագրութիւնը վերնագրով) յօդուած մը գրած էր Բիւզանդիոնի մէջ, ուր ցաւօք կ'յիշէր թէ ծնողք մեծ թերութիւն կ'գործեն պզտիկ տարիքէն տղաքը դպրոցէն հանելով, որոնք անուս կ'մեծնան եւայլն:

Կրկին անգամ եթէ յօդուած գրէք՝ մի ծածկէք անուննիդ, որ հրապարակաւ ամէն մարդ ճանչնայ ձեր ով ըլլալը, դիմակը բարեկենդանի յատուկ է: Յաջորդ թիւով օր էլ զախն:

Գ. Ո.



ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԿԻՒՏԱՐ. — Բարեպաշտ հաւատացեալ մը այն աստիճան յուզուեր և զգացուեր է աղջիկներուն Արեւազալի երգեցողութենէն, որ մտադրեր է Չատկի առթիւ իւրաքանչիւրին մէկ մէկ հատ Թէյքս Ամերիկէն տայամանդ Թէյքսի մատանի նուիրել, քանի որ արդէն 50 բոլորնոց ապրանքը 3 բոլորի իջած է:

Ծ. Խ. — Կը խրատենք յարգոյ նուիրատուն, որ փոխանակ նեղութիւն յանձն առնելով մինչև Բերա ելնելու, թող դիմէ Բոշէյի ախսէր Մըկըրին, ուր պիտի գտնէ աւելի ճաշակաւորներ:

ՆԻՒ-ԵՈՐԲ. — Մըսթըր Թօմաս Բըլիքը, որ ամուրի մարդ մը կը կարծուէր, երկու կին ունի եղեր: Երկրորդ կնոջ հետ ամուսնութեան պարագտներուն վրայ հետեւեալ յայտարարութիւնը ըրած է. — «Որովհետեւ առաջին կինըս շատ ծանր հիւանդ էր ճամբորդութեան մը առթիւ տունէն մեկնած պահուս, և վստահ էի թէ վերադարձէս առաջ պիտի մեռնէր, ասոր համար Ֆլորայի հետ (երկրորդ կինը) կարգարեցի Բ. ամուսնութեան գործ մը: Երկրորդ անգամ պիտի չամուսնանայի եթէ վստահ չըլլայի որ առաջին կինս պիտի մեռնէր»:

Ծ. Խ. — Խեղճը հաշիւը սխալ ըրեր է, վասն զի տունէն մեկնած օրն իսկ թիւ 1 կինը սկսած էր ապաքինիլ և երբ թիւ 2 կնկանը հետ տուն կը վերադառնայ, կատարեալ առողջութեան մէջ կը գտնէ իր թիւ 1 կինը, կը յանձնարարենք թիւ 2 տիկին Ֆլորայի, բնաւ չի հիւանդանալ, թիւ 3ի մը տեղ չի տալու համար:

ՕՔ ՆՈՔ
 ԼՈՐՔ ՆՈՔ
 ԱՏԱՆԱԾՈՔ

Վաղը, կիրակի, էհ, շատեր կ'երթան,
 Մեր եկեղեցին Ս. Երրորդութեան
 Ուր պիտի կատարուի խիստ հանդիսաւոր
 Աւարողութիւն որ չէ միշտ սովոր:
 Ս. Պատրիարքը անձամբ պիտի այց
 Արեւելեան երեւոյթներու նորոգման
 Արտոնութիւն որ կրէն զաւազան
 Մասնաւորապէս վարդապետական:
 Ասանկ անուններ պիտի եւ որ գիտնաք
 Արեւայի Վահե, Շաւարշ ու Պրակ:
 Իսկ Պատրիարքի Գեորգ Մեարդպետան
 Եւ Արաքիւրցի Պօղոս Կաշիւեան
 Ասանկ ընկերներ միւս անունաւ Վահրամ
 Նիկոլիսիանցի, եւ միւսքն Գեղամ
 Թեմիսկիւնեան Գարահիսարցի
 Զորս դասընկերներ վանիւն Արմաշի,
 Թեմիս դեռահաս, պիտի ըստանան
 Սարկաւագութեան վերին աստիճան:

X

Ուսուցիչ մը որ Արաքիւրի մէջ
 Պաշտօն կը վարէր եռանդով անշեջ
 Մէկ ամիս առաջ կը մեռնի յանկարծ
 Բողոքով այրի մը սիրովըն արծաթ,
 Սուգ մը ընդհանուր կարծես կը պատէր
 Մեռնողին չափ ցաւ այրին պատճառէր:
 Այսօր սրբաւորութեան ի՛նչ յուսաք վախճան,
 Պատմեմ, տեսք քե, անկումն եւ ո՛րքան:
 Ուր որ վերջ մահեկն խեղճով ուսուցչին,
 Այրին՝ որ սիրէր երկան փեռորդին,
 Կերթայ միանայ իսկոյն սիրողին
 Մեկեղ անտեղու գիւնին ու օդին ...:
 Յետոյ նոյն գիշեր կարգընկ կուգեն,
 Ազգականութիւն՝ կրտսէն, չունի գէն,
 Ու պատուելին Բողոքականաց
 Կերթան որ կարգէ իբրոր նըշանած:
 Պատուելին անխիղճ անուամբ Արմենակ
 Կրէն այդ պըսակ խիստ սարօրինակ,
 Այնպէս որ բոլոր բընակիւք գեղին
 Մէկ բերան, կրտսէն, հե՛յ վա՛խ մեռնողին,
 Անպիտան կրնի՛կ, անխեղ փեռորդի
 Գեւեղին տակն անցնին, ըրան կեր որդի:

X

Անցեալ ուրբաթ օր մեր Գասը-գիւղի
 Ս. եկեղեցին ամբոյս չի ու չի
 Արեւագալէն վերջ երբ կուկրնորէր
 Հրմուտ փարոջին փարոջն ու պատուէր,
 Օրհորդ մը խեղ կարդար միշտ Նարեկ
 Կայնած մէջ տեղը իբրեւ մի տիրեկ
 Ունեմ ծաղրեկն, այլ կը խընդային
 Իսկ նե խաջ հանէր ու կարդար կրկին:
 «Պե՛ մարդ Աստուծոյ, պօղոյ տեսնեմ շատ,
 Բարոք կը խօսի, ի՛նչ կարդայ եւ տես,
 Կը մըռմըռային գեղադեմ կրկին
 Եւ բարկանային զի ան ալ կին եր,
 Նոյն օրը ամբողջ, գիւղին մէջ հիւրեղ
 Խօսակցութեան նիւթ եղաւ ամեն տեղ:

X

Որքան գորգութեան ցոյց կուտան սա մեր
 Խընամակաւորունի ազնիւ փիկրներ
 Որք Գասը-գիւղի մեր վարժարանին
 Ամեն հոգ խընամք շատ սիրով տանին:
 Զատիկ առթիւ ալ զոյգ աղփատիկ
 Կը շինեն հազուա զիտարի ու կօշիկ,
 Ուրտուն երկուքի կեղայ անունը քիւ
 Նոյնչափ եւ իրենց յարգանք ու պատիւ:

X

Խմբագրութիւնը Հանրագիտակի
 Խնդրէ որ զրկեք խիստ փութանակի
 Այն բաժնեգիւններ որք վըճարուած չեն
 Թե կուգեք քերթեր միշտ շարունակեմ:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Սարգիս ԷՓ. Սիմոնեան, Մերսին. —
 Ստացած ենք Յովհաննէս ԷՓ. Վէնէտիկ-
 եանի տարեկան բաժնեգինը. նոյնպէս Պո-
 ղոս Եղիայեան եւ Նշան Զէլփէքեան ԷՓէնտի-
 ներու վեցամսեայ բաժնեգինները: Այս
 վերջնոյն պայմանաժամը լրացած ըլլալով
 այսօրուրէ կը դադրեցնենք:

Արտօնատէր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Զ. ԱՍՏԱՌԻՆԵԱՆ

Պապը ալի ճատտեսի, քիւ. 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈԻՐ ՏՂԱԹՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ անդային մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղիղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուրիչ դեղը, գնահատուած համբաւաւոր թիւղներէն. ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դաշկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԻԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից միջերանոցներու քով:

50—35

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՈՅ ԶԵՂԵՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուզողութեամբ, ապրանք տոկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբ շահած է բոլոր իրեն գիմուղ յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց բիշուիներու և տղայոց չիք և դիմացկուն ֆաբրիկաներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:

Գաւառներէն. յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—29

ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՝ ֆինասկար նիւթերէ բոլորովին զերծ է:



Եւ թիւը մազերը գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին կայսեր. Բժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք եղած հրահանգները տրուած են. ասկէ զատ ձերթուի վեգաի թըպպիյէի միջոցաւ մասնաւոր ազդարարութիւններ եղած են:

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապառաղջիկ ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ապրանք կը ծախեն:

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մազերը, զգուշացէ՛ք այս կարգի աղտոտ ու գունաւոր օտար ջուրերէն, եւ աւելի մաքուրը ու զուտը ստանալու համար դիմեցէ՛ք Մահմուտ բաշա ճատտէսի, իշխալ Արամ Էֆ. Սօղանճեանի 121 թիւ անուշահոտութեանց վաճառատունը, ուր պիտի գտնէք մաքուր ջուր ձեր մազերուն գունաւորման համար:

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել ՚Ա. Սօղանճեան ստորագրութեան:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՍ.Ռ.Ի.Կ.Ի ՄԵԾ Վ.Ա.ՃԱՍ.Ռ.Ա.ՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ զոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօրի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յապկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրիւի համար մուշամպա վերարկուներ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գեանի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և զօհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա. Պ Ա Ս Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելելու բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր զօհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50 - 25

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։

Ե. Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Հայ եկեղեցւոյ Շարականներուն վսեմութիւնը բացայայտ է արդէն, Մեծ Պահքի այս օրերուն մանաւանդ՝ կարելի չէ երեւակայել քրիստոնեայ մը որ փափաք չզգայ, հոգեկան կարօտը յագեցնելու, Արեւադալներով և ուրիշ Շարականներու ընթերցուածներով։

Երուանդ էֆ. Տ. Անդրէասեան խնամուած աշխարհաբարի մը վերածած է Շարականները, երկու հատորի մէջ ամփոփելով իր աշխատասիրութիւնը. Ա. հատորին գինն է 2¹/₂, Բ. հատորին գինը 5, երկու հատորը մէկէն 7¹/₂, զըշ. արտասահմանի համար 2 ֆր. գաւառներու համար 9 զըշ.։ Կը ծախուի Մոնզումեի Խմբագրատունը։